

240

1941

2(059)

2-14

0110

+

Եթէ զիս տանիս դէպ ի Յորդանան
 Բացուած երկինքի հրաշքներու ներքեւ,
 Կուգամ վայելել Քու սիրոյդ պարգեւ
 Վայրերն այն դալար, ջուրերն հանգստեան:
 Կուգամ ետեւէդ, եթէ տանիս զիս
 Կանայի զըւարթ ակումբներուն մօտ,
 Ուր թակոյկներուդ գինին ծաղկահոտ
 Պիտի արբեցնէ օրերը կեանքիս:
 Կամ եթէ տանիս զիս հոն՝ ուր յոգնած
 Ու վաստակարեկ նրստար մօտ հորին,
 Եւ Քու կենդանի ջուրէդ առօրին
 Կուգամ բուժելու ծարաւ անձկայրեաց:
 Կուգամ թէ տանիս զիս Գեննեսարէթ՝
 Ծովակին չքնաղ ափերուն վըրայ,
 Ուր անուշ հովին հետ կը թրթրոայ
 Արծազանք մը միշտ անջինջ բառերէդ:
 Պատրաստ եմ գալու, եթէ տանիս զիս
 Դէպ ի այն լերան կատարն անմարդի՝
 Ուր շողերն հազար արեւ ու վարդի,
 Ու բոցով կ'վառեմ ամպերն երազիս:
 Կուգամ ոստերով ձիթենիներու
 Հոն ուր յաղթութեամբ կ'ողջունուիս համակ
 Ու տարածելով ծործերս ոտքիդ տակ,
 Կը վազեմ փառքիդ շուքն ընդգրկելու:
 Կուգամ ետեւէդ մինջեւ վերնատուն
 Վերջի ընթրիքէդ բաժին առնելու,
 Եւ նուագելով երգ կամ ալելու,
 Կեդրոնի ծորէն ալ կ'անցնիմ ժպտուն:
 Բայց կը վարանիմ գալ Գեթսեմանի՝
 Ուր քունով մ'աչքերս պիտի ծանրանան
 Գուցէ այն ըլլայ իմ բունը մահուան
 Ու մեծ Անհունին գիրկը զիս տանի . . . :
 Մի՛, մի՛ զիս կանչեր աւելի հեռու
 Ուր անիրաւներ կը ծաղկեն ըգՔեզ
 Որ խարոյկի քով խանձողի մը պէս
 Կըծկած չը միսամ՝ մոխիր դառնալու:
 Մի՛, մի՛թէ կրնամ գալ Քու ետեւէդ
 Երբ խաչը ուսիդ կ'ելլես Գողգոթա,
 Բայց ի՛նչ սերտ հրապոյր, ի՛նչ բուռն ուժ է դա՝
 Որ զիս մինջեւ հոն կը տանի Քեզ հետ:

(ԵՂՐԾԷ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐԵԱՆ)

1941

ՅՈՒՆՈՒԱՐ

1941

«Աղասերով սպասեցի Տէրոջը, ու ծագեաւ ինծի ու լսեց իմ աղաղակս, և զիս կորսեալսն փոսէն, ազմարից կաւէն չափեց, ու ոտքերս վէմի վրայ չափաւորեց»: Սաղմ. ԼԹ. 1, 2: (Գ.Լ.Ի.) Թ. Բ. Գ. Բ. Ի. Բ. Բ.)

«Հիմա ի՞նչ բանի սպասեմ, Ով Տէր, իմ յոյսս Քեզի է փրկէ զիս իմ բոլոր
յանցանքներէս»: Սաղմ. 39. 7, 8:

(ԴԱԽԻԹ ՄԱՐԳԱՐԷ)

ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԲ.	ԵՐԵՔՇԲ.	ՉՈՐԵՔՇԲ.	ՀԻՆԳՇԲ.	ՈՒՐԲԱԹ.	ՇԱՔԱԹ.
						1 †
2 †	3	4	5	6	7 †	8
9 *	10	11	12	13	14 †	15 †
16	17	18 †	19	20 †	21	22
23 †	24	25	26	27	28	

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

- | | | |
|-----------------------------|-----------------------|----------------------------|
| 1. Ս. Գրիգորի աստուածաբանին | 9. Ս. Սարգիս զօրավարի | 18. Ս. Ղեւոնդեաց |
| 2. Բարեկենդան. Առաջաւորաց | 13. Ս. Ոսկեանց | 20. Վարդանանց տօն, |
| 7. Յովնան մարգարէի | 14. Տնառնդառուչ | ... Պոլսոյ ժող. 150 հյպաց. |
| | 15. Ս. Սանակ պարթեւ | 23. Բուն ըսրեկենդան |

Ե Ր Ա Ն Ի Ն Ե Ր

1. Երանի՛ հոգեով աղքատներուն՝ ... երկինքի թագաւորութիւնը անոնցն է:
2. Երանի՛ սգաւորներուն վասնզի անոնք պիտի մխիթարուին:
3. Երանի՛ հեղերուն՝ վասնզի անոնք պիտի ժառանգեն երկիրը:
4. Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արգարութեան, վասնզի անոնք պիտի կշտանան:
5. Երանի՛ ողորմածներուն, վասնզի անոնք ողորմութիւն պիտի գանեն:
6. Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են... անոնք պիտի տեսնեն զԱստուած:
7. Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, վասնզի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:
8. Երանի՛ անոնց որ հալածուած են արգարութեան համար, վասնզի երկինքի թագաւորութիւնը անոնցն է:
9. Երանի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը հալածեն եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի համար: Յնձացէ՛ք եւ ուրախ եղէ՛ք, վասնզի ձեր վարձքը չառ է երկինքը: Քանզի այս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները: Մատթ. 5. 8 - 12:

«Ո՛վ Տէր, Քու ճամբաներդ ցուցուր ինձի, Քու շաւիղներդ սորվեցուր ինձի: Քու ճշմարտութեանդ մէջ ինձի առաջնորդէ ու սորվեցուր ինձի... Քեզի պիտի սպասեմ ամէն օր»: Սաղմ. 25. 4—5: (ԴԱԼԻԹ ՄԱՐԳԱՐԷ)

ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԲ.	ԵՐԵՔՇԲ.	ՉՈՐԵՔՇԲ.	ՀԻՆԳՇԲ.	ՈՒՐԲԱԹ.	ՇԱՐԱԹ.
						1*
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15†
16	17	18†	19	20	21	22†*
23†/30	24/31	25	26	27	28	29†

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

1. Թէոդորոս զօրաւարին
15. Յովհ. Երուսաղէմայ հյրապ.

22. 40 մանկեր. Սերստ.
22. Տիւ եւ զիշեր հաւասար

29. Մուտն ի վիրապն
Ս. Դրիգոր Լուսաւորչի

ԱՂԵՐՍ՝ ԽՈՐ ՎԻՇՏԵՐՈՒ ՄԷՋԷՆ

Ահա այսօր միտքս է զեղուն՝ խորհուրդներով պիտանի,
Շնորհէ որ Տէր անունք չըլլայ յուսահատութեան տանի.
Բոլոր սրտով հնազանդիմ՝ հեզ ու խոնարհ՝ կամքիդ
Որ կարենամ փառաւորել զՔեզ՝ ի մէջ հետքերիդ:

Երբեմն ո՛վ Տէր, ճամբաս է մթին, շուարած՝ շեղիմ ուղիէն,
Երբեմն երկնային լոյսով մը ողորուած՝ տեսնեմ բարին
Մերթ ընդ մերթ աչքս դէպի ամպերուն յարած կը նայիմ Քեզի,
Երբեմն յուսահատ, ուժասպառ... Յիսուս, ողորմէ ինձի:

Ո՛հ, երբ կը դիտեմ ճարահատ, շուրջըս ամէն բան մթին,
Աշխարհային զուարճութիւնք անհատ, բոլորն ալ սին,
Երբեմն ըսթափած զերդ քունէն խորին քեզի կը նայիմ,
Որ սիրող Փրկչէս ըսփոփանք իմ խոր վիշտերուս հայցեմ:

Դու ես, ո՛վ Յիսուս երջանիկ իմ յոյս, օգնէ տրկարիս,
Որ չի մոլորիմ հետքերէդ վրսեմ, ուժովցուր Դու զիս.
Փառքըդ ինձ ցոյց տուր, ու քաշէ Քեզի որ ըլլամ ազատ,
Սին հաճոյքներէն ու մեղքէն հեռի, որդիդ հարազատ:

Դ. Կ. ՃԻՉՄԷՃԵԱՆ

Շարական— Շնորհեա մեզ Տէր արթնութիւն ընդ իմաստուն կուսանացն և
զհոգւոց մերոց լապտերըս պայծառացու:

ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԻ.	ԵՐԵՔՇԻ.	ՉՈՐԵՔՇԻ.	ՀԻՆԳՇԻ.	ՈՒՐԲԱԹ	ՇԱԲԱԹ
		1	2	3	4	5
6†	7	8	9	10†	11†	12†
13††	14	15	16	17	18	19†
20†	21	22	23	24*	25	26
27	28	29	30	31		

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

- | | | |
|------------------------------|-------------------------|-----------------------|
| 6. Ծաղկազարդ | 12. Ճրագալոյց | 20. Նոր Կիրակի |
| 10. Յիշտկ. ընթր. եւ ոտնլուսի | 13. Զատիկ Ս. Յարութեան | 24. Ընդհ. նահատակաց |
| 11. Յիշատակ խաչելութեան | 19. Գլխամ. Յովհ. Մկրտչի | 26. Բէպ. Ախրը (26 օր) |

ՅԻՍՈՒՍԻ ՀԻԱՆՍԱՆԻ ՍԷՐԸ

Ինչ մութ էր գիշերն որ պատած էր հոգիս,
Ինչ որ էր տառապանքն իմ Փրկչիս
Երբ որ անցաւ հոգւոյս ալեկոծ ծովէն,
Յրուեց խաւարս եւ սիրտս ըրաւ շէն:
Մինչեւ Գողգոթա գնաց ինծի համար,
Ինծի համար, ինծի համար,
Մինչեւ Գողգոթա գնաց ինծի համար
Մեռաւ որ ինձ կեանք տայ:

Մեղքիս տակ դողալով ինկայ ոտքերուն,
Անծանօթ էր ինձ ձրի փրկութիւն,
Յուզիչ ձայն մը ըսաւ փարատէ վախերդ,
Յիսուս ներեց բոլոր բու մեղքերդ:

Հիանալի սէր մ'էր Յիսուս ցոյց տրւաւ,
Գահը թող'լով Գողգոթա եկաւ,
Հնծանի մէջ կոխեց Ինքը առանձին,
Անհուն փառք սուրբ անուան իմ Փրկչին:

(Թարգմ. Է. Է. ԷԼՄԱՃԵԱՆ)

Շարական. — Զողորմութիւն Քո դուռն բաց մեզ Տէր, և արժանի ալա
զմեզ լուսեղէն յարկաց Քոց ընդ սուրբըս Քո:

ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԲ.	ԵՐԵՔՇԲ.	ՉՈՐԵՔՇԲ.	ՀԻՆԳՇԲ.	ՈՒՐԲԱԹ.	ՇԱՐԱԹ.
				1	2	3
4	5	6	7	8	9	10
11†	12	13	14	15	16	17
18	19	20	21	22†	23	24
25	26	27	28	29	30	31

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

11. Տօն երեւման Ս. Խաչին

22. Համբարձում

26. ձեմազի էվդէլ (30 օր)

ԵՐԳ ԻԵՂԱՅԵՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ (Սաղմ. 113+)

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, ի յասմնեալ մինչեւ յաւիտեան:
Օրհնեցէք մանկունք զՏէր, եւ օրհնեցէք զանուն Տեառն: Եղիցի
անուն Տեառն օրհնեալ ի յայսմնեալ մինչեւ ի յաւիտեան: Յա-
րեւելից մինչ ի մուտս արեւու օրհնեալ է անուն Տեառն: Ի յայսմ-
նեալ մինչեւ ի յաւիտեան: Փառք եւ երկրպագութիւն Հօր եւ
Որդոյ եւ Սրբոյ Հոգւոյն, եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յա-
ւիտեանից ամէն, ի յայսմնեալ մինչեւ . . . :

Փառք յարութեան Քո, Տէր, ոչ դադարեցայց Քրիստոս օրհնել
զՔեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Փառք յարութեան Քո, Տէր, ոչ դադարեցայց Յիսուս գովել
զՔեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ես ոչ դադարեցայց, Փրկիչ, փառաւորել զՔեզ զամենայն աւ-
ուրս կենդանութեան իմոյ:

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, օրհնեցէք զՏէր:
Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն, զՏէր ի սրբութիւն,
և օրհնեցէք զՏէր:

Հուսալայծառ հրեշտակն նստելով ի կենսատու գերեզմանին:
Եւ աւետէր կանանցն, յարեաւ Աստուած:

Աղօթք.— Տեսող ամենայնի՝ մեղայ Բեզ խորհրդով բանիւ և գործով, ջնջեալ՝
ձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ի դպրութեանն Կենաց:

(ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ)

ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԲ.	ԵՐԵՔՇԲ.	ՉՈՐԵՔՇԲ.	ՀԻՆԳՇԲ.	ՈՒՐԲԱԹ.	ՇԱԲԱԹ.
1 ^{††}	2	3	4	5	6	7
8 [†]	9 [†]	10 [†]	11	12	13	14 [†]
15 [†]	16	17	18	19	20	21 [†]
22	23	24	25	26	27	28
29	30					

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

1. Հոգեգալուստ
8. Եղիա մարգարէ
9. Ս. Հռիփսիմեանց

10. Ս. Կուսնց. Գայիանէից
14. Են ի վիրապն Սուրբ
Գրիգոր Լուսաւորչի

15. Տօն Կաթողիկէ եկեղեց-
ւոյ Ս. Էջմիածնայ
21. Մեծն Ներսէս հյրպտի.
21. Ճէմազի Ախլըր (29 օր)

ՅԻՍՈՒՍԻ ՓԱՌՔԸ Ի ՍԿՋԲԱՆԷ

1. Յիսուս Աստուած է: Յովհ. 1. 1: Փիլ. 2. 6: Կող. 1. 19: 2. 9: Սաղմ. 45. 7:
2. Աստուծոյ Որդի է: Սաղմ. 2. 7: Եբր. 1. 5: Մաթ. 16. 16: Ա. Յովհ. 1. 7:
3. Արարիչ, Ստեղծիչ է: Եբր. 1. 2: Կող. 1. 16: Ա. Կորն. 8. 6:
4. Լոյս և Կենսք է: Յովհ. 1. 4, 5, 7, 8, 9: Եբր. 1. 3: Ղուկ. 1. 78, 79:
5. Ուխտին հրեշտակը: Տէրջը հրեշտակը: Մաղ. 3. 1: Դաւ. 13. 3, 9, 13, 20-22:
6. Իմաստութիւն: Առակ. 8. 1. 12-36: Ա. Կորն. 1. 30: Գաղ. 2. 3:
7. Բան Աստուծոյ: Յովհ. 1. 1: Ա. Յովհ. 1. 1: Յայտ. 19. 13:

ԱՂՕԹՔ ԱՌ. ԱՍՏՈՒԱԾ

Անեղանելիդ Աստուած. Հայր ամենակալ, ընկալ զաղաչանս
մեր. Քոց պաշտօնէից:

Ի Հօրէ ծագումն անհառ. Արեգակն արդար, ծագեա ի յան-
ծինս մեր. զոյսդ ողորմութեան:

Ի Հօրէ թղխեալ Հոգի, աղբիւր բարութեան. լուսով Քով լցո
ըզմեզ. յայսմ առաւօտուն:

Երեք անծինք եւ մի ընտութիւն, մի Աստուածութիւն, զՔեզ
խոստովանիմք յաւէտ, Սուրբ Երրորդութիւն:

ՇԱՐԱԿԱՆ

1941

ՅՈՒԼԻՍ

1941

Աղօթք — Հայր թողութիւն տուր առնեց, վասնզի չեն գիտեր ինչ կընեն: —
Ղուկ. 23. 34: (ԽԱՉԵԱՆ, ՅԻՍՈՒՍ)

ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԲ.	ԵՐԵՔՇԲ.	ՉՈՐԵՔՇԲ.	ՀԻՆԳՇԲ.	ՈՒՐԲԱԹ	ՇԱՐԱԹ
		1+	2	3+	4	5
6	7	8	9	10	11	12
13+	14	15	16	17	18	19
20+	21	22	23	24	25	26+
27	28	29	30	31	08	82

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

1. Դանիէլայ Սեղրակայ Միսակայ : 13. Բարեկենդ, վարդավառ : 26. Ս. Թաղէսու եւ
եւ Արեղնագովի : 20. Վարդավառ : Ս. Սանդուխտ կոյսին
3. Ս. Թրգմանց, Սնկյ. եւ Մեսրպ.

ՅԻՍՈՒՍ ԻՆՉ ԵՂԱԻ ՄԵՂԱՌՈՒՈՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

1. Յիսուս մարմին եղաւ : Յովհ. 1. 14: Ղուկ. 2. 11, 12, 16: Փիլ. 2. 7:
2. Մառայ եղաւ : Մաթ. 20. 27, 28: Փիլ. 2. 7: Եսա. 42. 1: 52. 13:
3. Գառն Աստուծոյ եղաւ : Աշխարհին մեղքը վերցուց : Յվհ. 1. 29: Ես. 53. 7:
4. Փրկութիւն եղաւ : Ա. Կորն. 1. 30: Եփես. 1. 7: Եբր. 9. 12:
5. Մեղաւոր (մեղք) եղաւ : Ա. Կորն. 5. 21: Ես. 53. 6: Ա. Պետ. 2. 24:
6. Անէծք եղաւ անէծքէն մեղ ազատելու համար : Գաղ. 3. 10, 13: 4. 5:
7. Դատաւարտեցաւ : Հոմ. 8. 3: Գաղ. 3. 13: Զաք. 13. 7: Ես. 53. 8, 10:
8. Խաչուեցաւ եւ մեռաւ ամբարիշտներուն համար : Փիլ. 2. 8: Հոով. 5. 6:
9. Թաղուեցաւ, երեք օր երեք գիշեր գերեզմանը մնաց : Ա. Կորն. 15. 4—6:
10. Երրորդ օրը յարութիւն առաւ : Ղուկ. 24. 32: Ա. Կորն. 15. 4—6:
11. Քառասուն օր ետքը համբարեցաւ երկինք գնաց : Գործք. 1. 3, 9:
12. Հօրը աջ կողմը նստած Բարեխօսութիւն կընէ : Ա. Յովհ. 2. 1: Ա. Տիմ. 2. 5:

«Ձեզմէ ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ Քրիստոսի մէջ էր, որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, յափշտակութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւասար ըլլալը. հապա անծր ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով... Ինքզինք խոնարհեցուց, մինչեւ մահուան հնազանդ եղաւ, ու այն ալ խաչին մահուանը»: Փիլ. 2. 5-8:

1941

ՕԳՈՍՏՈՍ

1941

Աղօթք. — Աստուած իմ լի արասցէ զամենայն պէտս ձեր, ըստ իւրում մեծութեան փառք, ի Քրիստոս Յիսուս: Փիլ. 4.19: (ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ)

ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԲ.	ԵՐԵՔՇԲ.	ՉՈՐԵՔՇԲ.	ՀԻՆԿՇԲ.	ՈՒՐԲԱԹ.	ՇԱՐԱԹ.
					1	2
3	4	5	6	7	8	9+
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24 / 31	25	26	27	28	29	30+*

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

9. Եփեսոսի 200 հյրպոց. ժողովի
19. Շապան (29 օր)

30. Ս. Թովմաս տաքեալի.

30. մահ զօրավար Անդրանիկի (1927)

Ի Ղ Ձ Ե Ր

Տէրն էր որ ըսաւ. «Մի հոգաք երբէք եւ սակայն Աստուած կը ջամբէ հերիք թէ այսօր կամ վաղն ինչ պիտի ուտէք Այդ փոքրիկներու ումպ ու կերակրիկ, Նայեցէք երկնի սա թռչուններուն՝ Ու կը պահպանէ զանոնք ամէնքն ալ Որ կը թեւածեն ձեր մօտն ու հեռուն, Իրենց բոյնին մէջ՝ ուր կ'երթան տաքնալ Ոչ արտեր ունին եւ ոչ վարուցան. Անո՛ւշ մրափներով՝ զգուանքներով լի՝ Ոչ սերմ, ոչ հունձքեր եւ ոչ ալ հնձան. Դուք անոնցմէ չէ՞ք արժեր արելի, եւ ապագայի տաղտուկ հոգերով. Բայց ի՞նչպէս, ով Տէր, կրնային մարդիկ Ձեն մաշեր իրենց աւիւնն ու կորով, Թռչունի մը չափ ըլլալ երջանիկ:

(ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ)

«Ուստի կ'ըսեմ ձեզի, հոգ մի ընէք ձեր կեանքին համար թէ ի՞նչ պիտի ուտէք, ու կամ ի՞նչ պիտի խմէք. ոչ ալ ձեր մարմիններուն համար թէ ի՞նչ պիտի հագնիք. չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը հագուստէն: Նայեցէք երկնի թռչուններուն որոնք ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն և ոչ ալ բարի մէջ կը ժողվեն, ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք. չէ՞ որ դուք անոնցմէ աւելի լաւ էք...»:

«Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը եւ Անոր արդարութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին»: Մատթ. 6. 25-33:

1941

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1941

Շարական — Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք Քո. Օրհնութիւն 'ի բարձունս, օրհնեալ որ եկիրդ եւ գալոց ես անուամբ Տեառն. Ովսանեա 'ի բարձունս:

ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԻ.	ԵՐԵՔՇԻ.	ՉՈՐԵՔՇԻ.	ՀԻՆԳՇԻ.	ՈՒՐԲԱԹ	ՇԱՐԱԹ
	1	2	3	4	5	6†
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18*	19	20
21	22†	23	24	25	26	27†
28†	29	30				

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

6. Նիկիոյ Ս. ժով. 318 հայրաց. 18. Բամազան (30 օր)

22. Սիմէոնի Սիւնակեցոյն 27. Սր. Գէորգ

28. Տօն վարապայ խաչին

ՅԻՍՈՒՍ.—

ՓՐԿԻՉՍ, ԲԱՐԵՆՈՍՍ, ԱՌԱՋՆՈՐԴՍ, ՍՐԲՈՒԹԻԻՆՍ

Ով Տէր Յիսուս, Դու Փրկիչ իմ,
Մեղքի բերան տակ կը հիւծիմ
Սրբէ մեղքերս սուրբ արիւնով
Ըլլամ արդար գթած Հօր քով:

Ով Տէր Յիսուս Բարեխօսն իմ,
Ահա փութամ որ ես փարիմ
Գահն շնորհաց՝ պաղատագին
Սոստովան'լով մեղքերս մեկին:

Ով Տէր Յիսուս Դու ես իմ յոյս,
Խաւարին մէջ կուտաս ինձ լոյս.
Բռնէ աջէս ուղղէ բարին
Զօրացուր զիս յաղթեմ Չարին,

Ով Տէր Յիսուս Սրբութիւնն իմ,
Մնամ Քու մէջդ հաւատարիմ.
Սրբէ Դու զիս ըլլամ ազատ,
Մեղքի բիծէն եւ հարազատ:

Դ. Կ. ՃԻԶՄԷՃԵԱՆ

ԱՌԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

Կը հաւատամ ամենակալ Հօր Աստուծոյ, երկնի և երկրի Ստեղծողին, և Անոր Միածին Որդւոյն, մեր Տէրօջ Յիսուսի Քրիստոսի, որ յղացաւ Սր. Հոգիէն, ծնաւ Մարիամ կոյսէն, չարչարուեցաւ Պանտացի Պիղատոսի օրով, խաչուեցաւ, մեռաւ և թաղուեցաւ, և երորդ օրը յարեաւ մերեալներէն, երկինք համարձաւ և ամենակալ Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ. անտի պիտի գայդատել կենդանիները և մեռեալները: Կը հաւատամ Սրբ. Հոգւոյն, կաթողիկէ սուրբ եկեղեցւոյն, սուրբերուն հաղորդութեան, մեղաց թողութեան, մարմնոյ յարութեան և յաւիտենական կենաց: Ամէն:

1941

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1941

«Ա՛հ, այս ժողովուրդը մեծ մեղք գործեց, իրեն ոսկիէ տասուածներ չի ներով: Բայց հիմա եթէ անոնց մեղքերը կը ներես՝ ներէ, եթէ ոչ՝ կ'աղաչեմ աւրէ զիս քու գրած զիրքէդ»: Ելից 32. 31, 23: (ՄՈՎԱԶԱՍ ՄԱՐԳԱՐԷ)

ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԻ.	ԵՐԵՔՇԻ.	ՉՈՐԵՔՇԻ.	ՀԻՆԳՇԻ.	ՈՒՐԲԱԹ.	ՇԱԲԱԹ.
			1	2+	3	4+
5	6	7	8	9	10	11+
12	13	14	15	16	17	18+
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

2. Ս. Իշխանացն Սահակայ
 և Համագասպայ
 4. 72 աշակերտացն Քրիստոսի

11. Ս. Թրգմնչց. Վրդպոց.
 Մեսրոպ, Եղիշէ, Մովսէսի
 և Գրիգոր Նարեկացւոյն

17. Շէվալ (պայքամ. 3 օր)
 18. Ս. Աւետարանչաց
 26. Գիւտ խաչ

ԳԻՆԻ ԵՒ ԱՆՈՐ ԱՐԳԻՆԻՔԸ

1. Գինին, կ'ուրախացնէ մարդուն սիրտը: Սաղմ. 104. 15:
2. Գինին, ծաղր ընող է, ու ցքին կ'աւ հանող: Առակ. 20. 1:
3. Գինին, մարմինը կը մաշեցնէ: Առակ. 23. 20:
4. Գինին, օրէնքը մոռցնել կուտայ և դատաստանը կը ծռէ: Առակ. 31. 5:
5. Գինին աղքատութիւնը և նեղութիւնը կը մոռցնէ: Առակ. 31. 6, 7:
6. Աչքերդ օտար կիներուն կը նայի և սիրտդ ծուռ բաներ կը խօսի: Առակ. 23. 33:
7. Անիկա վերջապէս օծի պէս կը խածնէ ու քարբի պէս կը խայթէ: Առակ. 23. 25:

«Որո՞ւն է վայր որո՞ւն է ո՛հը, որո՞ւն են կռիւները. որո՞ւն են տրտուշ ներք. որո՞ւն են տասնց պատճառի վէրքերը. որո՞ւն է աչքերու կարմրութիւնը: Գինին քով մնացողներուն, խառնած գինին փնտռելու գացողներուն: Մի նոյնի գինին կարմրութեանը, գաւաթին մէջ իր գոյնը ցուցնելուն ու չիտակ վազելուն: Անիկա ետքը օծի պէս կը խածնէ ու քարբի պէս կը խայթէ, Անկէ ետքը քու աչքերդ օտար կիներու պիտի նային, և քու սիրտդ ծուռ բաներ պիտի խօսի: Եւ ծովու մէջ պառկողի պէս՝ ու կայմի վրայ պառկողի պէս պիտի ըլլաս»: Առակ. 23. 29—45:

«Մի՛ գինովնաք գինիով, որուն մէջ անառակութիւն կայ, հապա հոգիով լեցուցէք»: Եփես. 5. 18:

1941

ՆՈՅԵՄԲԵՐ

1941

Աղօթք — Ամենազորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի Քեզ... Հորհրդաւ և թշնամեաց իմոց և առեւելաց որ առ իս յանցանաց. և դարձո զնոսա ի չարեացն զոր ունին, վասն իմ... (Ն. ՇՆՈՐՀԱԼԻ)


ԿԻՐԱԿԻ	ԵՐԿՈՒՇԻ.	ԵՐԵՔՇԻ.	ՉՈՐԵՔՇԻ.	ՀԻՆԳՇԻ.	ՈՒՐԲԱԹ.	ՇԱՅԱԹ.
						1†
2	3†	4	5	6	7	8
9	10	11*	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23 / 30	24	25	26*	27	28	29†

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

1. Ս. Յովհանն Ոսկերերան
3. Ս. Ստեփաննոս հայրապետի

11. Զինադադար.
26. Գիւտ Հ. տառերու 406

29. Ս. Առաքելոց, Թաթևոս
եւ Բարդղիմէոսի




Մեղաւորը չուզեր դժոխք երթալ. բայց մեղքերու շղթան ալ չթողուր: Ուստի Սատանան, վերջապէս մեղքի շղթայէն բռնած քաշելով պիտի տանի զայն դժոխք: Իր մեղքերով շինուած շղթայով կապուելով պիտի նետուի կրակով ու ծծումբով վառած լիճին մէջ՝ որ է եկրորդ մահ: (Յայտ. 21. 8:

Շարական — Նշանաւ ամենայաղթ խոչիւդ Քո Քրիստոս պահպանեա
ղմեղ մարդասէր, յաներեւոյթ թշնամեոյ զի Դու միայն ես Թագաւոր փառաց
օրհնեալ յուրեան,

ԿԻՐՈՒԿԻ	ԵՐԿՈՒՇԲ.	ԵՐԵՔՇԲ.	ՉՈՐԵՔՇԲ.	ՀԻՆԳՇԲ.	ՈՒՐԲՈԹ	ՇՈՒՐՈԹ
	1	2	3	4	5	6
7†	8†	9	10	11	12	13†
14	15†	16	17	18	19	20
21	22	23	24	25	26*	27
28†	29	30	31			

ՏՕՆԱԿԱՆ ՓՐԵՐ

- | | | |
|--------------------------|------------------------|-------------------------|
| 7. Բարեկենդան Ս. Յակոբայ | 15. Իզնատրոս հայրապետ | 26. Դուրպան պրամ (± օր) |
| 8. Ս. Մինաս | 14. Զիլ Հասճէ (29 օր) | |
| 13. Ս. Յակոբ | 25. Ս. Ստեփանոս նիսկյ. | 28. Պօղոս Պետրոս |



ԻՆ ԱՇԵՐՈՒՄ, ԲԵՂԿԵՐՔ ԳՈՅ՝
ՄԲԹՆՆՉԱՂԷՆ ԼՈՅՄ ԴԷՎԻ ՆԵՐԱ,
ԲԻՂՉԱԿԻՆԱԿԱՐ, ԿՐ ԴԻՄԵՄ ԵՍ.
ՍԱՆԱՆՆԱԹԵԼ ՄԻՆ, ՍԻՐԱԲՈՂ ...:

Կողերու տակ՝ հըրաշափալ,
Խաղաղ նիրհող, շնորհաց ովկեանն,
Լափեց շանթը, մեղքիս դաժան,
Ու կր խալտայ, կեանքն հոգեզմայ:

Ուր խոկերս ա՛լ, մինչ՝ թեւահերծ՝
Կը թըռչըտին շուրջ խոցեալին,
Ողբի շիթերն իմ կը հալլե՛ն ...

Ու կը հոսի՛ն, հրաշքքով մ'անվերջ:

Ո՛վ Դողգոթա, հոգւո՛յս խորանն,
Որ՛ ամպին մէջ՝ լուսապայծառ,
Դու գաղտնիք մ'ես խընկապատար:
Ա՛հ, պահէ՛ զիս մէջդ յաւիտեան:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ

Կը խոստովանիմ որ Սր. Գրոց վեհափառութիւնը զիս ապշան-
քով լեցուց: Աւետարանի սրբութիւնը իմ սրտիս հետ կը խօսի...
Սր. Գիրքը այնքան գծեր ունի ճշմարտութեան, ու այնքան մեծ,
հրանալի ու այնքան աննախնդաց, որ անոր հետ ինչ իր գիցազնէն
չտա աւելի հիացման արժանի պիտի ըլլար: ԺԱՆ ԺԱԳ ՌՈՒՍՍՈ

Աշխարհի վրայ Սր. Գրքէն աւելի յստակ գիրք մը ընաւ գըտ-
նուած չէ: Սր. Գիրքը ուրիշ գրոց հետ այն համեմատութիւնը ու-
նի ինչպէս արեւ մոմի ճրագին հետ: Ս. Գրքէն դուրս ընաւ մի ել-
լէք, եթէ անոր մէջ մնաք, կեանքը պիտի չահլէք: ԼՈՒՏԷՐ

Սր. Գիրքը կենաց ծար մ'է, որուն զօրաւոր ու մշտնջենական
սաղարթաւոր գազաթիւն միջոցաւ երկնային հոգւոյն հովերը մերթ
զեփիւռի և մերթ սաստկաշունչ փոթորկաց նման կը փչեն: Անի-
կա սոսկալի և նոյն ատեն սիրաբոյր գիրք մ'է, խաղաղութիւն մը
որ ամէն խորհուրդէ վեր է: Անիկա գիրք մ'է, որ ամենէն խորունկ
հարցեր, շատ պարզ բառերով կը լուծէ. մանկան կը պատասխանէ,
և իմաստունի իմաստութեանց հետ կը չափաւի: ՊԷԹԷՐՍ

Աւետարանը հրանալի առաքինութիւն մը կը պարունակէ, որ
զօրեղապէս կը ներգարծէ ջերմութիւն մը ունի որ միանգամայն բա-
նականութեան կ'ազդէ և սրտին մէջ կը թափանցէ: Անիկա գիրք մը
չէ, իրականութեամբ ու զօրութեամբ օժուն կենդանի էակ մ'է որ
գէմը ելլող ամէն բանի վրայ կ'իշխէ ու կը տիրապետէ: ՆԱՓՈԼԷՅՈՆ

Գլխաւոր և միակ գիրքը որ արժանացած է ընդհանուրին ու-
շաղրութեան Աստուածաշունչն է: Ես իբր աշխարհի մարդ կ'ընեմ
աշխարհի մարդոց, Քննեցէք Սր. Գիրքը: (ՃԱՆ ՔՍԻՆՍ ԷՏԷՄՍ)

Այս մեծ ու գերընտիր Մատեանին ճշմարտութեանց սիրոյն
համար էր որ մեր հայերը թողլով իրենց հայրինիքը պանդխտա-
ցան ամայի վայրեր: Անոնք ոգևորուած Սր. Մատեանի սկզբունք-
ներով տառապեցան, չորաչար աշխատեցան, մինչև որ անապառը
ծաղկեցաւ վարդի նման: (ԶԱՔՍՐԻ ԹԷՅԼԸՐ)

Ես յոյժ չահաւետ գտած եմ Աստուածաշունչի ընթերցումը:
Ուղղամտութեան ու տառամախոհութեան վերածէ ԱՅՍ գրքէն որ-
քան որ կրնաս և մնացածը հաւատքով, և պիտի ապրիս ու պիտի
մեռնիս իբրև լուսագոյն մարդ մը: (ԱՅՐԱՀԱՄ ԼԻՆՔԸՆ)

Այս Գրքին կը պարտինք քաղաքակրթութեան զարգացումը,
և միայն Անոր նայելու ենք իբր մեր ուղեցոյցը թէ ներկային և
թէ ապագային համար: (ՀԱԼԻՍԻՍ ԿՐԱՆՈՒ)

Վերցուցէք մեր կեանքին մէջէն Սր. Գիրքը, յայնժամ ան-
գարմանելի հարուած մը պիտի տաք մեր ազգային յառաջգիմու-
թեան ու այն բարձր գաղափարներուն սրնցմով կը վարենք Ամե-
րիկան ու Ամերիկացիները:



ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՍՈՒՍԸ

Վատիկանի ամենահարուստ գրադարանի մոռացութեան արուած թուղթերուն մէջ գտնուած է տեղեկագիր մը, որ կը պատկանի Հռովմի գեր-հիւպատոս Պուրրիա-Լենտիլիային, որու մասին պատմարանները կ'ենթադրեն, թէ եղած է Պիղատոսի օրով Հռովմի Փոխարքայ, Պաղեստինի մէջ: Այդ տեղեկագիրը, ինչպէս կը հաղորդէ «Մաթէն», կը վերաբերի Յիսուս Քրիստոսի տնձնաւորութեան: Դեր-հիւպատոսը՝ Հռովմ կը տեղակայնէ, որ իր ուշադրութիւնը գրուած է մարդ մը, որու արտաքինը անիկա հետեւեալ ձեւով կը նկարագրէ.

«Նա ունի փայլուն և երկար մազեր, որոնք յարգ սանարուած են մինչև ականջները, յետոյ հիւսկէներով կը փռուին ուսերուն վրայ, մազերը իրարմէ բացուենքով կը զատուին: Քրիստոս մօրուք մ'ունի, որ գլխի մազերէն աւելի փայլուն են և երկճղի: Աչքերը կապոյտ են և փայլուն, արտայայտութիւնը, սովորաբար գգուական է, բայց երբեմն անոնք կ'արտափայլին սարսափելի տառապանքով. այսերը թեթև վարդապետն են:

«Այս մարդուն հասակը միջակ է և կազմուածքը գեղեցիկ, կեցուածքը ուղիղ, քիչ կը խօսի և անոր ձայնը մեղմ է: Անոր ժպտիլը երբեք տեսած չեն բայց լալը՝ յաճախ Անոր ձեռքերը շատ նուրբ են: Անոր Յիսուս կ'ըսեն, Մարիամի զաւակ. անոր բարեկամները զայն կը կոչեն Սատուծոյ Որդի:»

Այս վերջին պարագան գրուած է Դեր-հիւպատոսին ուշադրութիւնը:

ՀՈՈՎՄԱՅ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆԻ ՍԸ ՎԱՅՈՒԹԻՒՆԸ ՔՍ.Ի ՎՐԱՅՈՎ

«Այս օրերս Հրէաստանի մէջ անօրինակ բնաւորութեան տէր անձ մը երեւան ելաւ, որուն անունը Յիսուս Քրիստոս է: Բարբարոսները (հրեաներ) իբրև մարգարէ կը պատուեն զանիկա, սակայն իր աշակետները՝ իբրև իսկ եւ իսկ կենդանի Աստուծոյ Ծոցածինը կը պաշտեն զայն: Ինքը հասակաւ բարձր է և վայելչազեղ երեւոյթ մը ունի. իր դէմքը սիրուն և վեհանձն է: Իր մազերուն գեղեցկութիւնը և շնորհալի երեւոյթը աննկարագրելի են, որոնք գանկին մէջտեղէն ճեղքով մը Նազովրեցոց ցեղին պէս երկուքի բաժնուած՝ ականջներէն վար երկու ուսերուն վրայ գանգուր գանգուր վայելչապէս ձգուած են, որոնք գոյնին ու շարժումներուն անոյշ երեւոյթը կը զմայլեցնէ մարդը: Իր ճակատը տափակ և մեծ է, ծնօտներուն վրայ ամենեւին բիծ մը չկայ՝ բաց ի գեղեցիկ և սիրուն կարմրութենէ մը: Քթին և բերնին վայելչական համեմատութիւնները ամենակատրեալ են: Իր մօրուքը խիտ ու փառաւոր է և իր գլխու մազերուն կը համապատասխանէ, որ իր թուշին տակէն անմիջապէս երկուքի բաժնուած սրտին տախտակներուն վրայ կը տարածուի: Իր աչքերը գեղեցիկ, պայծառ և վառվառն են:

«Այս անձը յանդիմանած ժամանակը իշխանական վեհութիւնով կը վարուի, խրատած ժամանակ մեղմութեամբ և առ ինքն կը հրաւիրէ ամենամեղմ և համոզական ոճով մը: Բանիւ թէ արդեամբ իր ամէն սորվեցուցածները աւանդ մեծ էակի մը յատուկ և վայելուչ վսեմութիւնը ու կատարելութիւնները ունին: Ինքը համեստ, մաքրակենցաղ և իմաստուն անձ մ'է: Մէկ խօսքով, այս արտաքոյ կարգի տեսարանը ամէն ուր որ կայանք տայ, սա չափը ամենաստույգ է որ այս անձը չնաշխարհիկ գեղեցկութեամբ եւ աստուածաւորման կատարելութիւնով պսակեալ մարդ մ'է, ամենայնիւ գերազանց հասարակ մարդոց որդիներէն»:

1998 2108

0026360

ՀՀ Ազգային գրադարան



NL0026360

